Երևան], ծանրորդ: ԽՍՀՄ սպորտի (1934), ԽՍՀՄ սպորտի վաստ. (1961) վարպետ: Ավարտել է ֆիզ. կուլտուրայի հայկ. պետ. ինստ-ը (1953): Ծանրամարտի աշխարհի (1930), ԽՍՀՄ (1933–35), Անդրկովկասի և Հայաստանի (1930–54) չեմպիոն, աշխարհի ռեկորդակիր (1938): 1938–41-ին՝ «Սպարտակ» ԿՄԸ, 1945–1948-ին՝ ՀԽՍՀ սպորտպետկոմի ծանր աթլետիկայի պետ. մարզիչ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վազգեն Գուրգենի [ծ. 20.6.1948, գ. Մաստարա (ՀՀ Արագածոտնի մարզում)], բանասեր, լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1991): Ավարտել է ԵՊՀ (1970): 1978-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ-ում: Աշխատությունները հիմնականում վերաբերում են հայոց լեզվի պատմության, հայ գրքի մատենագիտության, բառարանագիտության, ընդհանուր լեզվաբանության և ժամանակակից հայ-ի հարցերին:

Երկ. Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ–ԺԹ դդ., Ե., 1990:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վեմիր Վանուշի (ծ. 6.11.1929, Վարդենիս), ճարտարագետ-մեխանիկ: Տեխ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (1985): Ավարտել է Դնեպրոպետրովսկի գյուղատնտ. ինստ-ը (1959): 1970–95-ին դասախոսել է Հայկ. գյուղատնտ. ակադեմիայում. 1984–85-ին՝ մեքենաների նորոգման և աշխատանքի պաշտպանության ամբիոնի, 1985-ից՝ ակադ-ին կից ճանապարհային երթևեկության անվտանգության ԳՀ լաբորատորիայի վարիչ: Աշխատանքները վերաբերում են ճանապարհային երթևեկության անվտանգության հարցերին: Հետազոտել է վարորդ-ավտոմոբիլ-ճանապարհ-միջավայր համակարգը և առաջադրել պատահարների կանխման գիտ. և գործն. մեթոդներ:

Երկ. Ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպումը և երթևեկության անվտանգությունը, Ե., 1981:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վիկտոր Համազասպի [5(18).9.1908, Թիֆլիս – 12.8.1996, գ. Բյուրական (ՀՀ Արագածոտնի մարզում), թաղված է Բյուրականում], աստղաֆիզիկոս, տեսական աստղաֆիզիկայի խորհրդային դպրոցի հիմնադիրը: Ֆիզմաթ գիտ. դ-ր (1935), պրոֆ. (1934), ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953), ՀՀ ԳԱԱ ակադ. (1943): ՀԽՍՀ (1940) և ՎԽՍՀ (1968) գիտ. վաստ. գործիչ: Հայաստանի ազգային հերոս (1994), սոց. աշխատանքի կրկնակի հերոս (1968, 1978): Ավարտել է Լենինգրադի պետ. համալսարանը (1928): 1931–43-ին աշխատել է նույն համալսարանում՝ աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ (1939), աստղադիտարանի տնօրեն (1939), ուս. մասի պրոռեկտոր (1941): 1943-ից աշխատել է ՀՀ-ում, ՀՀ ԳԱԱ հիմնադիր անդամներից է և առաջին փոխպրեզիդենտը: 1947–94-ին՝ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ (1994–96-ին՝ պատվ. պրեզիդենտ), 1946–88-ին՝ Բյուրականի աստղադիտարանի հիմնադիր (1988–96-ին՝ պատվ.) տնօրեն: ԽՍՀՄ ԳԱ նախագահության անդամ (1955–94, 1994–96-ին՝ ՌԴ ԳԱ խորհրդական): Հ. մեծ ավանդ ունի ՀՀ-ում ֆիզմաթ գիտությունների զարգացման, բնական և տեխ. գիտությունների բնագավառում հետազոտությունների մակարդակի բարձրացման, նոր, ժամանակակից գիտ. ուղղությունների ստեղծման և բարձրորակ կադրերի պատրաստման գործում: Աշխատանքները վերաբերում են տես. աստղաֆիզիկայի, աստղերի ու միգամածությունների ֆիզիկայի, աստղային դինամիկայի, արտագալակտիկ աստղագիտության, աստղերի և գալակտիկայի էվոլյուցիայի հարցերին: Ստեղծել է գազային միգամածությունների լուսարձակման քանակական տեսությունը, որը հիմք է ծառայել այդ բնագավառում կատարված հետագա հետազոտությունների համար: Մշակել է նոր աստղերից արտանետվող և անկայուն աստղերի մակերևույթից արտահոսող գազային զանգվածների գնահատման մեթոդ: Ստացված գնահատականները Հ-ին թույլ տվեցին գտնել աստղերի վիճակների փոփոխությունների առաջին նշանները: Մշակել է աստղային համակարգերի վիճակագր. մեխանիկայի հիմունքները: Ցույց է տվել, որ աստղակույտերն աստիճանաբար քայքայվում են: Քայքայման արագությունից ելնելով՝ գնահատել է աստղակույտերի տարիքը: Կրկնակի աստղերի նկատմամբ նոր մեթոդների կիրառման միջոցով հիմնավորել է Գալակտիկայի տարիքի կարճ (10^{11} տարի) սանդղակը: Ցույց է տվել, որ լույսի միջաստղային կլանումը Գալակտիկայում հարուցվում է ոչ թե անընդհատ միջավայրի, ինչպես ընդունված էր նախկինում, այլ բազմաթիվ մութ, փոշային միգամածությունների կլանող ամպերի առկայությամբ, որոնք կենտրոնացած են սիմետրիայի հարթության շուրջը: Այդ ամպերի ուսումնասիրության համար Հ. մշակել է ֆլուկտուացիաների տեսությունը: Ստեղծել է պղտոր միջավայրում լույսի ցրման յուրօրինակ տեսություն, որը հիմնված է իր առաջադրած ինվարիանտության սկզբունքի վրա և տալիս է պրոբլեմի ճշգրիտ լուծումը (ԽՍՀՄ պետ. մրց. 1946): *Համբարձումյանի ինվարիանտության սկզբունքը* դարձավ աստղաֆիզիկայի, ֆիզիկայի և երկրաֆիզիկայի մի շարք խնդիրների լուծման հզոր միջոց: Այդ սկզբունքի հիման վրա Հ. ստացել է նաև լույսի ցրման ոչ գծային տեսության որոշ խնդիրների լուծումներ: 1947-ին Հ. հայտնագործել է նոր տիպի աստղային համակարգեր (ԽՍՀՄ պետ. մրց. 1950, Բ.*Մարգարյանի* հետ), որոնք անվանել է *աստղասփյուռներ*: Հաստատել է աստղասփյուռների երիտասարդ լինելը, որն աստղային կոսմոգոնայի մի շարք սկզբունքային հիմնախնդիրների լուծման հիմք ծառայեց: Ապացուցվեց, որ Գալակտիկայում աստղառաջացման գործընթացները ներկայումս շարունակվում են, ունեն խմբական բնույթ: Բացահայտել է

T Ցուլի տիպի և բռնկվող աստղերի տեղն աստղային էվոլյուցիայի ընդհանուր շղթայում որպես զարգացման ամենավաղ փուլերի ներկայացուցիչների: 1950-ական թթ. Հ. հայտնագործել է Գալակտիկայի կենտր. խտացումների՝ գալակտիկաների կորիզների ակտիվությունը (տես *Ակտիվ գալակտիկաներ*): Մշակել է նախաստղերի վարկածը, որը հիմնվում է Տիեզերքում նյութի առայժմ անհայտ վիճակների գոյության ենթադրության վրա: Ըստ այդ վարկածի՝ նախաստ-



Վ. Հ. Համբարձումյան

ղերը մեծ խտությամբ օժտված փոքր չափերի մարմիններ են, որոնք տրոհվելով սկիզբ են դնում աստղերին և աստղային համակարգերին: 1995-ին աստղային համակարգերի դինամիկայի կառուցման աշխատանքների շարքի համար արժանացել է ՌԴ պետ. մրց-ի: Նախաստղերի վարկածի կապակցությամբ Հ. տվել է աստղերի գերխիտ գոյաձևերի տեսության հիմունքները: Ֆիզիկայում և աստղագիտության մեջ հանդիպող հակադարձ խնդիրների լուծման կարևոր արդյունքներ է ստացել: Հ. գիտության մեջ նոր ուղղությունների հիմնադիր է, Սանկտ Պետերբուրգում և Բյուրականում ստեղծել է գիտ. դպրոցներ, որոնք մեծ ազդեցություն են թողել աստղագիտության շատ բաժինների զարգացման վրա:

Հ. եղել է Հայկ. հանրագիտարանի ստեղծման նախաձեռնողներից և առաջին գլխ. խմբագիրը (1965–74), 1965–87-ին՝ Հայկ. հանրագիտարանի գիտախմբագր. խորհրդի նախագահ (ՀՀ պետ. մրց. 1988): ՀԽՍՀ (1947–51) և ԽՍՀՄ (1950–1989) Գերագույն խորհուրդների պատգամ., ԽՍՀՄ ժող. պատգամ. (1989–91) և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամ (1989–91): ՀԽՍՀ «Գիտելիք» ընկերության վարչության նախագահ (1947-ից): «Աստղաֆիզիկա» համամիութենական հանդեսի գլխ. խմբագիր (1964–87), ՀԽՍՀ ԳԱ խմբագրահրատարակչական (1947–56), ԽՍՀՄ ԳԱ աստղագիտության գծով միացյալ գիտ. (1974–87) խորհուրդների, ԽՍՀՄ ԳԱ կոսմոգոնիայի հանձնաժողովի (1952–64), ՀԽՍՀ պետ. մրց-ների կոմիտեի (գիտ. և տեխ. գծով, 1970-ից) նախագահ: ԽՍՀՄ ԳԱ նախագահության (1955–88), ԽՍՀՄ Լենինյան և պետ. մրցների կոմիտեի (գիտ. և տեխնիկայի գծով, 1947–72) անդամ: Միջազգ. աստղագիտ. միության անդամ (1948–96), փոխպրեզիդենտ (1948–55), պրեզիդենտ (1961–1964), Գիտ. ընկերությունների միջազգային խորհրդի պրեզիդենտ (1968–72):

Աթենքի (Հունաստան, 1983), ԱՄՆ-ի ազգ. (1959), Անգլիայի (Լոնդոնի թագավոր. ընկերության, 1969), Արգենտինայի (1975), Ավստրիայի (1956), Բելգիայի (Լիեժի թագավոր. գիտ. ընկերության, 1953), ԲԺՀ (1974), ԳԴՀ (Բեռլին, 1957), Դանիայի (1971), Իտալիայի (1967), Կորդոբայի (Արգենտինա, 1974), Հոլանդիայի (1970), Հնդկաստանի (1976), Նյու Յորքի (1974), Ֆրանսիայի (1958–74), Շվեդիայի (1973), ՉՍՍՀ (1971) ԳԱ-ների, բնախույզների «Լեոպոլդինա» ակադեմիայի (Հալլե, ԳԴՀ, 1959) օտարերկրյա անդամ, Աստղագնացության միջազգ. ակադեմիայի թղթ. անդամ (1978), ԱՄՆ-ի արվեստների և գիտությունների ակադեմիայի (1957), Քեմբրիջի (Անգլիա, 1969), փիլ., ԱՄՆ-ի (1947), Կանադայի (1959), Մեծ Բրիտանիայի և Խաղաղօվկիանոսյան աստղագիտ. ընկերությունների (1953), Սիրիայի գիտության պատմության ընկերության (1985), Ադրբ. (1972), Վրաց. (1978) ԽՍՀ-ների ԳԱ-ների պատվ. անդամ: Ավստրալիայի ազգ. (Կանբերա, 1963), Լիեժի (Բելգիա, 1967), Կարլի (Պրահա, 1967), Լա Պլատայի (Արգենտինա, 1974), Սորբոնի (Փարիզ, 1965), Տորունի Կոպեռնիկոսի անվ. (Լեհաստան, 1973) համալսարանների պատվ. դոկտոր:

Թբիլիսիի (1979) և Երևանի (1985) պատվավոր քաղաքացի:

Պարգևատրվել է Լոմոնոսովի (1971), Վավիլովի (1970), Հելմհոլցի (ԳԴՀ, 1971), Ժանսենի (Ֆրանսիա, 1956), Բրյուսի (ԱՄՆ, 1959), «Լեոպոլդինա» ակադեմիայի Կոտենիուսի (ԳԴՀ, 1974), Սերմենտոյի (Արգենտինա, 1974) անվ. մեդալներով, Լոնդոնի թագավոր. ընկերության (1960), Սլովակիայի ԳԱ (1970), ՉՍՍՀ (1984) ոսկե մեդալներով:

Երկ. Տիեզերքի էվոլյուցիայի պրոբլեմները, Ե., 1968: **Научные труды, т. 1–2, Е., 1960; Проблемы внегалактических исследований, в кн.: Вопросы космогонии, т. 8, М., 1962; Нестационарные объекты во Вселенной и их значение для исследования происхождения в эволюции небесных тел, в кн.: Проблемы современной космогонии, 2 изд., перераб. и доп., М., 1972; Философские вопросы науки о Вселенной, Е., 1973;** On the Evolution of Galaxies, "Le structure et l'evolution de l'univers", Bruxelles, Ed. Stoops, 1958; On the Nuclei of Galaxies and Their Activity, "The Structure and Evolution of Galaxies", Interscience Publishers, London–New York–Sydney, 1965; Problems of Physics and Evolution of the Universe, Yerevan, 1978.

Գրկ. Վիկտոր Համազասպի Համբարձումյան (կենսամատենագիտություն), Ե., 1958: Միրզոյան Լ. Վ., Վիկտոր Համ-

Օ.Կ.Համբարձումյանը ելույթի պահին

Խ. Մ. Համբարյան

բարձումյան (ծննդյան 70-ամյակի առթիվ), Ե., 1978: **Виктор Амазаспович Амбарцумян [биобиблиография], М., 1975; Мирзоян Л., Виктор Амбарцумян /жизнь и деятельность/, Е., 1985.**

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Օֆելյա Կարապետի (ծ. 9.1.1925, Երևան), երգչուհի: ՀՀ ժող. արտիստուհի (1959): Զայնամշակման դասընթացն անցել է Ռ.Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում: 1944-ից՝ հեռուստատեսության և ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մենակատարուհի: Երգեցողությունն առանձնանում է խոր արտահայտչականությամբ, ազգ. վառ երանգավորումով: Երգացանկն ընդգրկում է հիմնականում հայ ժող., գուսան. և աշուղ. երգեր: Համերգներով հանդես է եկել ԱՊՀ քաղաքներում, արտասահմ. հայաբնակ վայրերում (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Ֆրանսիա, ԱՄՆ):

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԻՆՎԱՐԻԱՆՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ, ճառագայթման տեղափոխման կամ մասնիկների դիֆուզիայի ընթացքների ուսումնասիրության եղանակ: Առաջարկել է Վ. *Համբարձումյանը* 1942-ին և դրա հիման վրա մշակել պղտոր միջավայրերում լույսի ցրման արդի տեսությունը (ԽՍՀՄ պետ. մրց. 1946): Ըստ Հ.ի.ս-ի՝ կիսանվերջ միջավայրին մտովի կամայական հաստության շերտ ավելացնելիս, միջավայրը դարձյալ մնում է կիսանվերջ, իսկ դրա անդրադարձման հատկությունը՝ անփոփոխ (ինվարիանտ): Վերջավոր հաստության միջավայրերի դեպքում, ըստ Հ.ի.ս-ի, շերտի թափանցման և անդրադարձման հատկությունները մնում են անփոփոխ, եթե դրա մի եզրին ավելացվում, իսկ մյուս եզրից անջատվում է միևնույն հաստության շերտ: Հ.ի.ս. կիրառվում է Արեգակի և մոլորակների մթնոլորտների հատկությունների և աստղերի ընդերքում կատարվող ֆիզ. երևույթների, Երկրի մթնոլորտի և ջրային ավազանների երկրաֆիզ. հետազոտություններում, միջուկային ռեակտորում նեյտրոնների տեղափոխման խնդիրները լուծելիս:

ՀԱՄԲԱՐՅԱՆ Ազատ Սարգսի [ծ. 8.6.1926, գ. Սաթխա (Վրաստանի Նիկոծմինդայի շրջանում)], պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1976): Ավարտել է Լենինականի մանկավարժ. ինստ-ի պատմության ֆակ-ը (1948): 1980-ից՝ ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ-ի նոր դարի պատմության բաժնի վարիչ: Ուսումնասիրությունները վերաբերում են հայ ժողովրդի պատմության նոր շրջանի սոց-տնտ. հարաբերությունների, ազգ-ազատագր. շարժումների և հաս-քաղ. մտքի պատմությանը: Մասնակցել է հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի (ակադեմ. հրատարակության VI հատորի) աշխատանքներին:

Երկ. Ազգարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856–1914), Ե., 1965: Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908–1914), Ե., 1979: Արևմտահայերի 1915 թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Ե., 1990: Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ), Ե., 1990: Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898–1908 թթ.), Ե., 1999:

ՀԱՄԲԱՐՅԱՆ Խաչիկ Մինասի [ծ. 22.9. 1919, գ. Նալբանդ (այժմ՝ գ. Շիրակամուտ, ՀՀ Լոռու մարզում)], գեներալ-գնդապետ (1969): Ռազմ. գիտ. թեկնածու (1965): Ավարտել է Մ.Ֆրունզեի անվ. (1948) և Գլխ. շտաբի (1959) ռազմ. ակադեմիաները: ԽՍՀՄ հայրենական պատերազմի ժամանակ եղել է մոտոհրաձգ. դասակի, վաշտի, գումարտակի, 1944-ից՝ գնդի հրամանատար: Աչքի է ընկել Բելոռուսիայի ազատագրման, 1945-ին՝ Քյոնիգսբերգի գրավման ժամանակ: 1948–57-ին ծառայել է Հեռավոր Արլ-ում, Կուրիլյան կղզիներում, Սախալինում (գնդի, դիվիզիայի հրամանատար): 1968-ից՝ ցամաքային զորքերի գլխ. հրամանատարի տեղակալ՝ ցամաքային զորքերի մարտ. պատրաստության գլխ. վարչության պետ և ռազմ. խորհրդի անդամ: ՌԽՖՍՀ (1963), ԲԽՍՀ (1967) Գխ պատգմ.: 1989-ից՝ պաշտոնաթող:

Գրկ. Համբարյան Ռ., Գեներալի երրորդ աստղը, Ե., 1974:

ՀԱՄԴԱԼԼԱՀ ՂԱՋՎԻՆԻ (1281–1349/50), պարսիկ մատենագիր: Ղազվին քաղաքի և շրջակայքի տնտ. կառավարիչ մոնղ. իլխանությունում: Գրել է տարբեր բնույթի ստեղծագործություններ: 1340-ին ավարտած «Սրտերի զվարճությունը» պատմաաշխարհագր. ստվար աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է նաև Հայաստանի XIII–XIV դդ. տնտեսության և աշխարհագրության ուսումնասիրության համար:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ, որակական ածականի և մակբայի արտահայտած հատկանիշի առավել կամ պակաս լինելը ցույց տվող ձևեր: Հայ-ում Հ.ա. լինում են դրական, բաղդատ., գերադր. և դրսևորվում են կամ համադր. եղանակով՝ բառի սկզբնաձևի վրա մասնիկ ավելացնելով, կամ վերլուծ. եղանակով՝ Հ.ա. ցույց տվող բառերի հարադրմամբ: Ժամանակակից հայ-ում գերիշխում է Հ.ա. կազմելու երկրորդ եղանակը. համեմատության իմաստն արտահայտվում է մակբայներով (առավել, քիչ ևն), ածականներով (արտակարգ, զարմանալի ևն): Համադր. կազմությունը սահմանափակ է (մեծ-ամենամեծ-մեծագույն):

«ՀԱՄԻԴԻԵ», քրդերից կազմված անկանոն հեծելագնդեր Թուրքիայում: Կազմակերպել և իր անունով կոչել է թուրք. սուլթան *Աբդուլ Համիդ II*, 1891-ին: «Հ.» միավորումները (մոտ 30 գունդ) ստեղծվել են հայերի ազատագր. շարժումները ճնշելու, Արմ. Հայաստանում և Թուրքիայում հայկ. ջարդեր կազմակերպելու, հնարավոր պատերազմի դեպքում ռուս.